**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԾՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

21-ը դեկտեմբերի 2015թ.
ժամը $11^{00}$

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Ս. Գրիգորյան,
գնահատողներ՝
ՀՀ ԶՈՒ ԹՎ պարենային ծառայության պետ, գնդապետ Վ.Գասպարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Է. Ճաղարյան:

***«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2 – ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Գ.Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի մասին.
2.«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Գ.Տերյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար «Սննդամթերքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | Ա/Ձ Արայիկ Աբրահամյան |
| 2 | Ա/Ձ Ժաննա Պետրոսյան |
| 3 | <Ս և Գ> ՍՊԸ |
| 4 | <ՏԻՍԱ> ՓԲԸ |
| 5 | <ՏԴՀԴոնսկոյ Ագրոխիմ Ցենտր> ՍՊԸ |
| 6 | <Մաստերֆուդ> ՍՊԸ |
| 7 | <Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ> ՍՊԸ |
| 8 | <Սմայլ> ՍՊԸ |
| 9 | <Ալեքս Գրիգ> ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2 .«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Գ.Տերյան)

2.1 Թվով 8 մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի, իսկ <Ալեքս Գրիգ> ՍՊԸ կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում որևէ փաստաթուղթ ներբեռնված չէ, ուստի և հանձնաժողովը դրանք գնահատելու հնարավորություն չունի, որի հայտը մերժվել է:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2- ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ <Սմայլ> ՍՊԸ և Ա/Ձ Ժաննա Պետրոսյան հայտերի, որտեղ <Սմայլ> ՍՊԸ հանդիսանալով ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն հրավերով նախատեսված <ֆինանսական միջոցներ> չափանիշի հավելված 3.3 փոխարեն ներկայացրել է հավելված 3.3.1-ը, իսկ Ա/Ձ Ժաննա Պետրոսյանը <մասնագիտական փորձառություն> հավելված 3.1-ում նշել է, որ նմանատիպ պայմանագիր չի իրականացրել: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման կարգի> 45-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և ծանուցվել է վերը նշված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում <Սմայլ> ՍՊԸ շտկել է անհամապատասխանությունը, իսկ Ա/Ձ Ժաննա Պետրոսյանը ոչ, ուստի վերջինիս հայտը մերժվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Գ.Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 8 մասնակից.

| Չ/բ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | «Ա և Գ» ՍՊԸ | «ՏԻՍԱ» ՓԲԸ | Ա/Ձ Արայիկ Աբրահամյան | «ՏԴ«Դոն սկոյ Ագրոխիմ Ցենտր » ՍՊԸ | Ա/Ձ Ժաննա Պետրոսյան | «Մաստերֆուդ» ՍՊԸ | «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ | «Սմայլ» ՍՊԸ | 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Շաքարավազ սպիտակ /Շաքարավազ/ | կգ | 837 971 | 275/ 330 | | | 350 | | | 305/ 366 | | «Ա և Գ» ՍՊԸ |
| 2 | Սխտոր, գլուխ /Սխտոր/ | կգ | 4 385 | | 1240/ 1488 | 1500 | | | | | 1178.33 / 1414 | «Սմայլ» ՍՊԸ |
| 3 | Վիտամիններ /Վիտամին Ց/ | կգ | 1 772 | | | | | | | | | Առաջարկի բացակայություն |
| 4 | Ծխախոտ, ֆիլտրով /Ծխախոտ ֆիլտրով/ | տուփ | 830 280 | | | | | | 209 | | | «Մաստերֆուդ» ՍՊԸ |
| 5 | Խնձոր /Խնձոր/ | կգ | 16 824 | | 190/ 228 | | | 330 | | | 290/ 348 | «ՏԻՍԱ» ՍՊԸ |
| 6 | Քացախ, խնձորի /Քացախ/ | կգ | 10 713 | | 410/ 492 | | | | | | | «ՏԻՍԱ» ՍՊԸ |
| 7 | Կերակրի աղ (քարաղ) /Կերակրի աղ (քարաղ)/ | կգ | 4 980 | | | 139 | | | | | 110/ 132 | «Սմայլ» ՍՊԸ |
| 8 | Համեմունքներ /պղպեղ կարմիր/ | կգ | 2 142 | | 825/ 990 | 1650 | | | | | | «ՏԻՍԱ» ՍՊԸ |
| 9 | Համեմունքներ /պղպեղ սև/ | կգ | 2 142 | | 2345/ 2814 | 4900 | | | | | | «ՏԻՍԱ» ՍՊԸ |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **10** | Մանդարին /Մանդարին/ | կգ | 7 137 | | 310/ 372 | 450 | | | | | | «ՏԻՍԱ» ՍՊԸ |
| **11** | Զովացուցիչ ըմպելիքներ /Գազավորված ըմպելիք/ | լիտր | 6 574 | | | | | | | | | Առաջարկի բացակայություն |
| **12** | Համեմունքներ /Չորացրած կանաչի, ռեհան չորացրած/ | կգ | 826 | | | 7950 | | | | | | Ա/Ձ Արայիկ Աբրահամյան |
| **13** | Համեմունքներ /Չորացրած կանաչի, մաղադանոս չորացրած/ | կգ | 826 | | | 7950 | | | | | | Ա/Ձ Արայիկ Աբրահամյան |
| **14** | Համեմունքներ /Չորացրած կանաչի, սամիթ չորացրած/ | կգ | 826 | | | 7950 | | | | | | Ա/Ձ Արայիկ Աբրահամյան |
| **15** | Համեմունքներ /Չորացրած կանաչի, ծիտրոն չորացրած/ | կգ | 826 | | | 7950 | | | | | | Ա/Ձ Արայիկ Աբրահամյան |

Մասնակիցների առաջարկներում կոտորակներով առանձնացված է առաջարկվող գները առանց ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափով և դրանով:
«ՏԴ«Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր » ՍՊԸ-ն, Ա/Ձ <Ժաննա Պետրոսյան>, Ա/Ձ «Մաստերֆուդ» ՍՊԸ, Ա/Ձ Արայիկ Աբրահամյան, «Սմայլ» ՍՊԸ, «ՏԻՍԱ» ՍՊԸ առաջարկել են ԵՏՄ երկրների արտադրության ապրանք:

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակցի հետ բանակցություն չի վարվել:

3.4 «ՏԻՍԱ» ՓԲԸ 5-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են ***չհիմնավորված ցածր գնային առաջարկներ և որոշվել է մասնակցից պահանջել համապատասխան հիմնավորում:***

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Գ.Տերյան)

4.1 «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Ա և Գ» ՍՊԸ, 2-րդ և 7-րդ չափաբաժիններով՝ «Սմայլ» ՍՊԸ, 4-րդ չափաբաժնով՝ «Մաստերֆուդ» ՍՊԸ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ չափաբաժիններով՝ «ՏԻՍԱ» ՓԲԸ, 12-15 չափաբաժիններով՝ Ա/Ձ Արայիկ Աբրահամյանը: 3-րդ և 11-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը գնահատող հանձնաժողովի որոշմամբ չի կայացել՝ ոչ մի հայտ չի ներկայացվել հիմքով :

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Գ.Տերյան)

5.1 Մասնակցի կողմից հայտի վերաբերյալ հարցում չի կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ.Տերյան)

«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը , ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| գնահատող | Ս. Գրիգորյան |
| գնահատող | Վ. Գասպարյան |
| գնահատող | Է. Ճաղարյան |
| Գնումները համակարգող՝ | Գ. Տերյան |